ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով
համակարգիչների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 06.03.2018թ. ժամը 12.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/
Վ. Ավետիսյանը

Անդամներ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Հ. Սարոյանը
Ա. Պետրոսյանը
Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ՝ Կ. Եսայանը
Ա. Համբարձումյանը

Հանձնաժողովի քարտուղար՝
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Ա. Գալուստյանը

1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

Ընդունել ի գիտություն, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության /ՀՀՌՑ/ կարիքների համար համակարգիչների ձեռքերման նպատակով ս.թ. փետրվարի 27-ին էլեկտրոնային ARMEPS համակարգով հայտարարվել է «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /Ընթացակարգ/: Հայտերը բացվել են էլեկտրոնային www.armeps.am կայքի միջոցով ՀՀՌՑ-ի վարչական շենքում, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեում, ս.թ. մարտի 6-ին, ժամը 12.00-ին:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, տվյալները

N	Մասնակցի անվանումը	էլ. փոստի հասցեն	ՀՎՀՀ
1	Կոմպասս ՍՊԸ	compassarmeps@gmail.com	01545204
2	ԷԼՄԱՐԿԵՏ ՍՊԸ	tamarapetrosyan@eldorado.am	00112776

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 ԷԼՄԱՐԿԵՏ ՍՊ ընկերությունը Ընթացակարգին մասնակցել է 1,2 չափաբաժիններով, ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը: Հավելված 10-ով սահմանված վճարման պահանջագրում արձանագրվել է ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/6 ծածկագրով հրավերի /հրավեր/ պահանջներին անհամապատասխանություն. հայտի ապահովման գումարը պակաս է գնային առաջարկի հինգ տոկոսից:

3.2 Կոմպասս ՍՊ ընկերությունը Ընթացակարգին մասնակցել է 1-ին չափաբաժնով, ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

4. Մասնակցի առաջարկած գինը, նախահաշվային գինը

4.1 Չափաբաժին 1՝ նախահաշվային գին՝ 500 000 ՀՀ դրամ, ներ. ԱԱՀ, Կոմպասս ՍՊԸ՝ 549 000 ՀՀ դրամ, ներ. ԱԱՀ:

4.2 Կոմպասս ՍՊ ընկերության գնային առաջարկը 1-ին չափաբաժնով գերազանցում է նախահաշվային գինը:

5. <u>Հանձնաժողովը որոշեց</u>

5.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետով՝ մերժել ԷԼՄԱՐԿԵՏ ՍՊ ընկերության հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

5.2 Ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությամբ՝ նիստը կասեցնել երկու աշխատանքային օրով մինչև ս.թ. մարտի 12-ը ժամը 12.00-ը: Կոմպասս ՍՊ ընկերությանը 1-ին չափաբաժնով հրավիրել գների նվազեցման բանակցությունների:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

<u>Ի գիտություն 07.03.2018թ.</u>
Սահմանված ժամկետում Կոմպասս ՍՊ ընկերությունը գրությամբ հրաժարվել է 1-ին չափաբաժնով գնային առաջարկը նվազեցնել /կցվում է/:

5.3 Հաշվի առնելով վերոնշյալը՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած.
ա) 1-ին չափաբաժնով՝ ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի /Օրենք/ 37 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը
բ) 2-րդ չափաբաժնով՝ ղեկավարվելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով:
Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

5.4 Հաստատել չկայացած ընթացակարգի մասին հայտարարության տեքստը /կցվում է/:
Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Վ. Ավետիսյան

անդամներ՝ _____ Հ. Սարոյան

_____ Ա. Պետրոսյան

_____ Կ. Եսայան

_____ Ա. Համբարձումյան

քարտուղար՝ _____ Ա. Գալուստյան